ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ թիվ ՍՑ-LO-2020/146 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սիսակյանի) թիվ ԿԴ/2532/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 08.07.2020թ.-ին կայացված որոշումը, որով հայցի ապահովման նպատակով արգելվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանին՝ ՍՑ-LO-2020/146 ընթացակարգով «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8770-2020 գրությամբ «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-LO-2020/146 ընթացակարգի քննությունը կասեցնել մինչև ԿԴ/2532/02/20 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**